

ձեր պատրաստութիւնները լմնցնելու : Այո՛, յանցաւորքն դուք էք : Իօան է՛ որ քարածէթ սիւռող կանանց՝ նոյն այրիչ նիւթը բաշխեց : Ֆէլիքս Բիան է՛ որ պատրոյգները պատրաստեց : Դրիտոն է՛ որ ըսաւ . « Հարկ է խնամք ունենալ որ չըլլայ թէ շիշերուն բերանը բաց մնայ » : Հասարակաց հրդեհին յանձնաժողովը շատ աղէկ իր պարտքը ըրաւ : Այ, աղետաւոր յանցաւորք . անօրէն խելացնորք : Երկինք վկայ են ինձի որ սիրտս կ'ատէ վրիժուց փոխարէնը , նա մանաւանդ միշտ թողութեան հակամիտութիւն ունեցած եմ . սակայն այս անգամուն ինչ մեծագոյն պատուհաս կայ՝ որ քան զարգարութիւնը կարենայ առաւելուլ , և զնտակաց հարուածներուն ներքեւ իյնալով ինչ զղջման աղաղակ կրնաք արտաբերել , որուն Աստուած կարենայ լսել :

Կը շարունակուի :

Բարոյակաւ և քաղաքակաւ տնտեսւորքիս :

(Տես Հատ. ԻԹ. Էրես 373 :)

ՀԵԿԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ամեն բանի գիտն ընծայութեան և խնդրողութեան համեմատ կը փոխուի :

Գումարման օրը անսովոր շարժումն տիրած էր ՚ի Միրըպոյ . ձեռագործարանն՝ որ երեք ամիսէ ՚ի վեր փակուած էր , ութ օրուան մէջ դարձեալ կը բացուէր . ատենէ մ'ի վեր նախագուշակեալ այս լուրը հրապարակաւ հասարակաց ծանուցուեր էր և ամենայն խօսակցութեանց նիւթ էր . — միթէ գործատան հին գործաւորներէն ամենքն ալ պիտի ընդունուէին դարձեալ . կամ թէ արդեօք մէկ մասը միայն պիտի ընդունուէր . ինչ պայմանաւ արդեօք պիտի ընդունուէին . որոնք պիտի ընտրուէին և որոնք դուրս պիտի ձգուէին . —

ասոնք զանազան հարցմունքներ էին զորս ամենայն ոք ինքն իրեն կ'ընէր և ենթադրութիւններ ընելէ դուրս ուրիշ բանի կարող չէր :

Գործաւորաց անուանագրութիւններ կրորդ օրը պիտի սկըսէր և բոլոր շաբաթը պիտի տւէր : Կալուածատեարք՝ պատերազմի ձեռնամուխ եղող զօրավարաց պէս՝ իրենց անձինքը աչքէ անցընել կ'ուզէին , որպէս զի գիտնան թէ իրենց բանին գործին յարմար որչափ մարդ կրնային ունենալ : Երեքամսեայ դադարմամբ գործաւորաց դասերուն մէջ պակասներ բացուած ըլլալու էին . ոմանք թերևս ապրելու հնարք փրնարուել ստիպուելով կարելի է զբաղանք գտեր էին , զոր չէին ուզեր ձգել . այլք տեղացի չըլլալով կրնային իրենց հայրենիքը դառնալ աշխատութիւն գտնելու յուսով : Այս պատճառներէն մէկուն կամ միւսոյն համար այլևայլ գործաւորներ պէտք էին պակսիլ ՚ի կոչ . այս պարագայն մնացողաց յոյսը կ'աւելցընէր մէկէն գործի մէջ մտնելու :

Նաև ուրիշ մեծ խնդիր մ'ալ մտքերը կը զբաւէր . արդեօք ոռճիկք առաջուան պէս պիտի ըլլային . յայտնի է թէ փափարելին այն էր , բայց ոչ ոք կը համարձակէր այս հարցման հաստատապէս պատասխան մը տալ . կանխաւ շատ զանազան կարծիքներ կ'ընէին . ոմանք՝ ինչպէս յաճախ կը պատահի , միայն զիրենք մտածելով կ'ըսէին թէ ՊՊ . Լընուար և Տիւպիւիստոն չէին կըրնար ոռճիկները նուազեցնել , մինչդեռ հացը դեռ սուղ էր . և մինչդեռ գործաւորք եռամսեայ դադարմամբ ամենայն ապրուստնին սպառեր էին . խոհեմազոյնք ոմանք կը տարակուսէին թէ զինները առաջուան պէս բարձր չըլլան . վասն զի ժամանակը դեռ անյաջող էր . շատերն ալ որոշ գաղափար չունէին . միայն մէկմէկու ուրախակից կ'ըլլային գործարանաց կրկին բացուելուն համար , և երջանիկ կը համարէին զիրենք աշխատութիւն ունենալուն համար , ըլլայ նաև քան զանցեալն ըստորնագոյն հատուցմամբ :

վարժանոցին մէջ տաք տաք կը վիճէին մեծ լրոյն վրայ խօսակցելու համար ժամանակէն առաջ ժողովուած ըլլալով . հոն գտնել կը յուսային զլընուար և զՏիւպիստոն և քանի մը տեղեկութի ստանալ . որոնք չեկան գործատան կըրկին բացուելուն պատրաստութեանց սաստիկ զբաղած ըլլալով . ուստի մեր բարեկամքն աւելի ևս բորբոքեցան, սակայն խօսակցութիւննին անանկ չէր ինչ որ տարի մը առաջ մի և նոյն պարագայից մէջ կրնային ընել . յայտնի կ'երևար թէ ժողովուրդը Տիւբրէի բացախօսութիւններէն օգտուած էր, այլ հիմակուան ըսածներնուն մէջ ալ շատ վրիպակ կարծիքներ կային: Մարդիկ այսպէս են . երբ շահու միաս կայ՝ քան զայն չարագոյն ժամանակ չիկրնար ըլլալ . ալ անկէ ետքը պաղ արեամբ չեն մտածեր և ամեն բան կողմնակցութիւն կը քննեն: Տիւբրէ սովորականէն աւելի աշխոյժ ընդունելութիւն գտաւ . կարծես թէ մտքերը լուսաւորելով անստոյգ խնդիրը պիտի լուծէր:

— Բարեկամք իմ, ըսաւ խօսքին ըսկիզբ տալով, գիտե՞նք հիմա թէ բան ճարելու համար կրած աշխատութիւննիս կամ նեղութիւննիս է հիմն աժէքի . ըստ այսմ՝ եթէ կարենայինք զայն յառաջ բերելու համար պէտք եղած աշխատութիւնը պակսեցընել՝ անոնց աժէքը պակսեցուցած կ'ըլլայինք . եթէ յաջողէինք բոլորովին անհետ ընել, իրք ալ աժէք չէին ունենար:

— Շատ շնորհակալ եմ, բարձրաձայն աղաղակեց Անդրէաս . յուսամ թէ այսմ չենք հասնիր . ինչպէս կրնայինք ապրիլ մենք որ աշխատութեամբ կ'ապրինք:

— Իսկ ինչպէս շնչած օդդ, արևու ջերմութիւնն ու խմած ջուրդ կը ճարես Միրըպոյի մէջ:

— Խօսք է . այդ բաներն ամենուն վտյեբն են, զնելու բան չիկայ:

— Շատ աղէկ, բարեկամ . եթէ իրք աժէք չունենային՝ ամենունը պիտի ըլլային, և առանց աշխատութեան և նեղութեան կարելի պիտի ըլլար զանոնք ձեռք բերելը . կը հասկընաս հիմա:

— Այո՛ . ալ աշխատութեամբ անհանգիստ պիտի չըլլայի, վասն զի պէտք եղածն առանց աշխատութեան պիտի կարենայի ճարել:

— Դեռ այս վիճակիս մէջ չենք զրժբաղդաբար, մանաւանդ թէ բարբաղդաբար, վասն զի այս աշխարհիս մէջ քան զայն դառն կեանք չէր կրնար ըլլալ եթէ ժամանակնիս առանց զբաղանաց անցընէինք: Միշտ իրաց աժէքը կերպով մը խափանարար է մեր պիտոյի . ցը լրման, յաճախ արգելք ըլլալով այն բաները ճարելու: Իրաց աժէքը նուազեցնել զանոնք յառաջ բերելու համար պէտք եղած աշխատութիւնը նուազեցընելով, հնարք է մարդկանց բարեկեցութիւնն աւելցընելու, որ արդիւնք է շինութեան լաւագոյն հնարքներ գտնուելուն . միթէ այս բանս անչափապէս փափաքելի վախճան մը չէ, և արդիւնաւորեալ զարգացմունք միթէ նորագոյն յառաջադիմութիւններ ալ փափաքելի չեն ըներ մեզի: Կը հարցընեմ ձեզի ամենուդ, որք շատ անգամ կը ստիպուիք զրկել զձեզ շատ մը բաներէ ամենաբարձր գին ունենալնուն համար:

— Շատ ճշմարիտ է, պատասխանեցին բազմաթիւ անձինք:

— Միթէ գլխաւորապէս փափաքելի չէ մանաւանդ աղքատաց համար՝ քան թէ ընչեղաց:

— Խնդիր չիվերցըններ, ըսին միաբերան ամենքը, որոնց կ'ակնարկէր խընդիրը:

— Ապահով էի ձեր պատասխանին վրայ, բարեկամքդ իմ . բայց շատ ուրախ եմ ձեր բերնովն իսկ այս ճշմարտութիւնս հաստատելուս վրայ . շատ հետևանք պիտի տեսնէք որ կը յառաջագային ասկէ . մէկմէկէ կարևոր բաներ, որոնցմէ մէկ քանին պիտի զարմացընեն զձեզ՝ վասն զի մինչև ցարդ ըստ բաւականի միտ դրած չէք: Թողլով զանոնք ժամանակին, դառնանք մեր նիւթոյն:

Իրաց աժէքը, ըսինք, գրեթէ միշտ համեմատական է կրելիք նեղութեան

իրն այն կէտին հասցընելու համար որ կրնայ մեզի ծառայելի ըլլալ: Սակայն աշխատութիւնն ինքնին ոչ հաստատուն ուղղիչ է և ոչ միակ ուղղիչ ածէքի: Հացն օրինակ առնունք. ցորենն ապրանք մ'է՛ որ ամեն տարի մի և նոյն աշխատութիւնը կ'ուզէ, և սակայն իր ածէքը տարուէ տարի մեծապէս կ'աւելնայ, որուն ցաւալի փորձը տեսաք այս տարի: Մետաքսեղէնք և երկաթեղէնք՝ զոր ձեզմէ շատերը կը ձեռակերտեն, մի և նոյն աշխատութիւնը կ'ածեն ինչ որ երկու կամ երեք տարի առաջ, և սակայն հիմա ստորնագոյն գնով կը ծախուին. մանաւանդ թէ ալ ամենին չեն ծախուիր. գուր նոյնպէս հացի կարօտութիւն ունէիք և աւելի սուղ կը ծախուէր. աւելի քիչ զգեստ գնեցիք, մինչդեռ մետաքսը շատ աւելի աժան էր:

Այս է որ մի և նոյն իրին ածէքը արդէն փոփոխելի ըլլալով պահանջուած աշխատութեան բնութեանը համեմատ տարբերութիւն կը կրէ նաև շատ մը մասնական պարագաներով, որոնց մէջ կարևորագոյն ուշադրութեան արժանի է նոյն բանը փափաքողին և զայն ունեցողին և ծախողին վերբերական հանգամանքը: Բան մը սուղ է երբ գնողը ծախողին հետամուտ է. ընդհակառակն զինը կը կորսնցընէ երբ ծախողը գնողին հետամուտ կ'ըլլայ: Նիւթոյ մը գինը կը պակսի երբ գնողը մէկի տեղ երկու կը գտնէ, և զինը կ'աճի երբ մի և նոյն նիւթոյն համար մէկի տեղ երկու գնողը ընդ առաջ կ'ելլեն: Այս բանս համառօտ կերպով կը բացատրուի երբ ըսենք թէ իրաց ածէքը կամ գինը խնդրողութեան կամ ընծայողութեան համեմատական է:

— Ի՞նչ կը հասկըցուի ասով, իսկոյն հարցուց Ռնորիոս. և նախ ի՞նչ հասկընալու է խնդրողութիւն և ընծայողութիւն բառերէն:

— Ես ալ այսօր գլխաւորապէս զայս պիտի բացատրեմ ձեզի: Ամեն անգամ որ ապրանքի կամ ո՞ր և իցէ իրի մը տէրը, գործատէր կամ խանութպան իր

վաճառքը գնող կը փնտրուէ, կ'ըսուի թէ ընծայելիք վաճառք կամ նիւթ ունի. այսմ հակառակ ամեն անգամ որ խանութպան մը, գործածող մը կամ ո՞ր և իցէ անձ մը կը փափաքի որպիսի և իցէ բան մը գնել, կ'ըսուի թէ այն նիւթը կը խնդրէ կամ կը փնտրուէ: Վաճառք ընծայելի են երբ խանութպան մը կ'ըսէ. կ'ուզե՞ք գնել. և կը խնդրուի երբ գնող մ'ընդ առաջ կ'ելլէ ու կ'ըսէ. կ'ուզե՞ք ճախել, կամ ճախելիք ունի՞ք: Երբ վաճառանոցին մէջ գնողէ աւելի ծախող կը գտնուի, կ'ըսուի թէ ընծայելիս խնդրելիէն աւելի է. երբ ընդհակառակն աւելի կ'ըլլան գնողք քան զծախողս՝ խնդրելիս քան զընծայելիս աւելի է:

— Բայց, ըսաւ Ռնորիոս, վաճառանոցի մէջ ամեն բան չիծախուիր, մանաւանդ թէ շատ քիչ բան. ուստի ի՞նչ պէս կրնայ ըսուիլ:

— Մի և նոյն բացատրութիւնը միշտ կը բանի, որով ամեն բան աղէկ կը հասկըցուի. ամեն տեսակ վաճառուց համար կ'ըսուի թէ վաճառանոցին մէջ շատ կայ երբ տեղ մը կամ ամբողջ երկրի մը մէջ առատ է և դիւրին է ձեռք բերելը, թէ և ամենին իսկ վաճառանոց բերուած չըլլայ: Նոյնպէս կ'ըսենք թէ այս ինչ վաճառքը քիչ կը գտնուի վաճառանոցին մէջ, երբ քիչ է երկրին մէջ և գնողաց ուզածէն նուազ քանակով. վասն զի հիմակուան ժամանակս աւանը, քաղաքը, գաւառը, նոյն իսկ համօրէն աշխարհս իբրև անհուն վաճառանոց կը համարուին, ուր անդադար բազմութիւն գնողաց և ծախողաց զիրար կը մղեն, և ուր ամեն տեսակ վաճառանոցներ կը տեսնուին:

— Ետ աղէկ կը հասկընամ այս բանս, ըսաւ լէոնարտոս, և ինձի կ'երևայ թէ արդէն իսկ կը տեսնեմ անկէ ծագելիք ածէքի կամ իրաց գնոյն զանազանութիւնը. բայց յայսմ ամենայնի խնդիրը գնողաց և ծախողաց նկատմամբ է, զնեալ կամ ծախեալ վաճառուց նրկատմամբ. բան մը չեմ տեսներ որ գործաւորաց և աշխատութեան վերաբերի:

— Վասն զի բառերու վրայ կանկ կ'առնուս, լէոնարտ: Աշխատութիւնն իսկ վաճառք է ուրիշ վաճառուց պէս. երբ գործաւոր մը ինքզինքը գործատան մը կ'ընծայէ բանիլ փափաքելով յայնմ, ինչ կ'ընէ, բայց եթէ կրցած աշխատութիւնն ընել: Ընդհակառակն երբ տէրը գործաւոր մը բանեցնել կ'ուզէ, ուզածը միայն անոր աշխատութիւնն է. այս երկու պարագայից մէջ ալ խընդրողութիւնն և ընծայողութիւնն կայ: Աշխատութիւնը կ'ընծայուի երբ գործաւորը իր բազուկներն աշխատութեան կ'ընծայէ. իսկ կը խնդրուի երբ տէրը գործաւորին աշխատիլը կ'ուզէ: Կ'ըսուի նաև թէ ընծայուին առ աշխատող քիւն սաստիկ շատ է՝ երբ աշխատութիւնը գործադրելու համար շատ գործաւորք զիրենք կ'առաջարկեն. և աշխատողքեան մեծապէս խնդրողութիւնն կայ՝ երբ շատ տեարք մի և նոյն գործոյ համար գործաւորներ կ'ուզեն. նոյնպէս կ'ըսուի թէ ընծայուին առ աշխատող քիւն խնդրողութեան և անկէ երբ գործ մը կատարելու համար այնչափ գործաւորք կ'ընծայուին որ գործատեարք չեն կրնար զբաղեցնել. հակառակը տեղի կ'ունենայ և աշխատող քեան խնդրողութիւնը ընծայուին առ շնորհ կ'ըլլայ, ամեն անգամ որ գործատան տեարք իրենց պէտք եղածին չափ գործաւոր չեն գտներ:

Ուստի կը տեսնէք որ աշխատութիւնն իրօք վաճառք ըլլալով կրնանք մի և նոյն բացատրութիւնն ընել միոյն կամ միւսոյն վրայ խօսած ժամանակնիս: Աշխատութիւնը կ'ըլլայ ուրեմն ամենայն վաճառուց նման սակաւագիւտ կամ առատաձիր. կ'ըլլայ ընծայեալ կամ խնդրեալ. նոյնպէս կ'ըսուի թէ ընծայուին խնդրողութեանէն աւելի է կամ նուազագոյն է, և կամ թէ հաւասար է, վասն զի այս երեք դէպքն ալ կրնան հանդիպիլ: Սակայն միտ դնելու է որ սովորական խօսակցութեան մէջ գրեթէ միշտ այս բացատրութիւններն հակառակ իմաստիւք կ'ըլլուին: Օրինակ իմն. կ'ըսուի թէ առատ աշխատու-

թիւն կայ, փոխանակ ըսելու թէ գործաւորք զիւրաւ զբաղանք կրնան զրտնել. և հակառակ իմաստիւք՝ քիչ աշխատութիւն կայ կ'ըսուի. այս կերպ խօսակցութեամբ իրաւացի է որ ամենուն միտքը շփոթի: Ասանկ, անդադար կը լսէք որ կ'ըսուի թէ գործաւորք աշխատութիւն կը խնդրեն երբ ծառայութիւննին կ'ընծայեն և գործ կը փնտրուեն. և թէ աշխատութիւն կը տրուի իրենց՝ երբ ընդհակառակն կը վարձուին. վասն զի ընդ մէջ դաշանց գործաւորաց և տեարց՝ պէտք է տեսնալ ստոյգ տուրևառ մը իբրև ընդ մէջ գնողաց կամ վաճառողաց, յորում տեարքն են գնողն, և գործաւորք՝ վաճառողք, և գնեալ և վաճառեալ ապրանքն է աշխատութիւնը: Վաճառողն է միշտ անիկա՝ որ կ'ընծայէ, և գնողն՝ ով որ կը խնդրէ:

— Այս բացատրութիւնները, ըսաւ լէոնարտ, մեզի համար ինչուան հիմա խրթին մնացած շատ մը բաներ կը բացայայտեն, և կ'օգնեն լաւագոյն հասկընալու ընդ մէջ տեարք և գործաւորաց եղած վերաբերութիւնները: Այս աշխատողքի խնդրելու և տալու յորում բացատրութիւնները, փոխանակ ըսելու թէ աշխատութեան կ'ընծայուի մէկը կամ թէ աշխատութիւն կ'առաջարկուի, ոչ միայն կը շփոթեն այն գաղափարն որ ունինք տեարք և գործաւորաց փոփոխակի վերաբերութեանցը նկատմամբ, այլ նաև նոյն իսկ աշխատութեան նկատմամբ:

— Կը պրանչանամ, լէոնարտ, որ իմ բացատրութեամբքս միտքդ ուղղուեր է. բայց տեսնենք թէ ինչ հետևանք կը յառաջագային 'ի փոփոխութեանց որ կրնան հանդիպիլ 'ի մէջ ընծայման և խնդրողութեան:

Միայն երեք դէպք կրնան ընդ առաջ ելլել. ընծայուին հաւասար խընդրողութեան, կամ առաւելագոյն և կամ նուազագոյն: Արդ եթէ կայ բան մը հաստատեալ 'ի փորձոյ ամենայն դարուց և ամենայն երկրի, այս է թէ քանի մը գիւնը միշտ ուղիղ նստուա-

տակասն և խնդրողութեան, և անուշ
դիտ ընծայման, ըսել է թէ ուրիշ ա-
մենայն պարագայք իսկ հաւասարորդը
ըլլալով, որչափ աւելի բան մը խնդրուի՝
այնչափ աւելի սուղ կ'ըլլայ. ընդհակա-
ռակն՝ որչափ աւելի ընծայուի, այնչափ
գինը նուազագոյն կ'ըլլայ :

— Ուրեմն, ըսաւ Անդրէաս, ապրանքին
գինը պէտք է որ աւելնայ այնու-
միայն՝ որ շատ գնողք կ'ընծայուին. ընդ-
հակառակն պէտք է որ աժընձայ՝ երբ
վաճառել ուզողաց թիւը գնել ուզողաց
թիւը կ'անցնի :

— Աղէկ է, Անդրէաս. բայց բացա-
տրութեանդ վրայ պզտիկ ծանօթութիւն
մ'աւելցնելու է. այսինքն՝ որպէս զի
վաճառքի մը գինն աւելնայ կամ պակսի՝
պէտք չէ որ գնողաց թիւը վաճառողաց
թիւէն աւելի ըլլայ կամ նուազ. բա-
ւական է որ խնդրեալ քանակը մեծա-
գոյն ըլլայ կամ ստորնագոյն ընծայեալ
քանակէն : վաճառողաց թիւը կրնայ
շատ մեծագումար ըլլալ և գնողացը
շատ դոյզն. նոյն իսկ կարելի է որ մէկ
գնող միայն ըլլայ. բայց եթէ գնել
ուզուած վաճառուց քանակը աւելի
է քան զայն զոր ունին ամենայն վա-
ճառողք՝ ապրանքը բարձր գին կ'ու-
նենայ : Ընդհակառակն կրնայ ըլլալ
որ շատ բազմութիւն գնողաց ներ-
կայանան և վաճառքը սակաւաթիւ ըլ-
լայ. նոյն իսկ կարելի է որ մէկու մը
ձեռք ըլլայ միայն. և սակայն եթէ այն
մէկուն ձեռք եղած քանակը աւելի
ըլլայ ամեն գնողներուն ուղած քա-
նակէն, գինը վար կ'իջնայ : Ուրեմն վա-
ճառքի մը ընծայման բնական արդիւնքն
է անոր գինը պակսեցընել. և խնդրողու-
թեան՝ աժէքն աւելցընել :

— Նոյնը կը հասկընանք վաճառա-
կանութեան մէջ ալ, ըսաւ Սոժոն, ը-
սելով թէ հարիւրին տասը տարբերու-
թիւն կայ ընդ մէջ կ'ոռգէ՞ք ճախելոջ,
և կ'ոռգէ՞ք գնելոջն :

— Ի՞նչ կը հասկըցուի այնու ճշդիւ,
հարցուց Անդրէաս :

— Ըսել է թէ, պատասխանեց Սո-
ժոն, որ եթէ բան մը ըստ սովորականի

կ'աժէ 100 Ֆրանք՝ կը ծախուի 95 Ֆր.,
եթէ արդիւնարարը կամ խանութպանն
է որ 'ի վաճառումն կ'ընծայէ. ընդհա-
կառակն կրնայ ծախուիլ 105 Ֆրանքով
եթէ գնողը պէտք ունի այնմ. առաջին
պարագային մէջ վաճառողը դոյզն զի-
ջողութիւն կ'ընէ սովորական գինէն
վար, որպէս զի գնող գտնէ. երկրորդ
պարագային մէջ զպարագայն իրեն օգ-
տակար կ'ընէ վաստակն աւելցընելու :

— Բայց ինչու գոհ չըլլար սովորա-
կան գնով. այլոց պէտքն իրեն պատեհ
ընելը զեղծանիլ է իր վիճակով :

— Ահաւասիկ վարդապետութեան
կը սկըսիս, Անդրէաս, վրայ բերաւ Տիւ-
բրէ. կրնայի ես ալ ըսել քեզի թէ
գնողն ալ կը զեղծանի իր վիճակաւը
95 Ֆր. վճարելով ապրանքի մը՝ որ սո-
վորաբար 100 կ'աժէ. բայց այս բանս
չեմ ըսեր, վասն զի բնական բան է :
Գնողն ալ ծախողն ալ կը ջանան լաւա-
գոյն շահիւք լեցընել իրենց կրած նե-
ղութիւնը, որ ունեցեր են, մէկը վաճա-
ռելի բաներ ճարելով, միւսը վճարելի
ստակ հայթհայթելով : Եթէ պատեհ ա-
ռիթները շահաւոր չենք ըներ մեզի, ձա-
խորդ պատահարներով կը կործանինք :
Ո՛ւր մնաց որ վաճառողն և գնողը կրնան
պաշտպանել փոփոխակի իրենց շահը՝
ինչուան այն կէտն որ երկուքն ալ ի-
րենց կողմանէ անշահ համարին այն
տուրեւառութիւնն ընելը : Զոր օրինակ.
Անդրէաս, երբ խանութ մը կ'երթաս բան
գնելու համար, միթէ չե՞ս ջանար ըստ
կարելւոյն ստորին գնով առնելու : Խա-
նութպանին շահուն համար զքեզ շա-
հէդ կը զրկես :

— Հապա. այն իրեն գործն է և ոչ
իմս :

— Իրաւունք ունիս. բայց որովհետև
կրցածիդ չափ աժան առնուլ կը ջա-
նաս, ինչո՞ւ համար կը նեղանաս երբ
ինքն ալ ըստ կարելւոյն սուղ կը ջանայ
ծախել քեզի : Դուն քու շահդ կը նա-
յիս, ինքն ալ իւրը, միթէ իրաւացի չէ :

— Ստոյգ է. անիրաւութիւն կ'ըլլար
բովանդակն ինծի համար ուղելս :

— Այս բանս ստէպ կը պատահի մեզի առանց իսկ ուզելնուս և գիտնալնուս, վրայ բերաւ Տիւբրէ. բայց շարունակենք խօսքերնիս: Ես երկու անհատի վրայ կը մտածեմ, որ են գնողն ու ծախողը, որոնք երկուքն ալ իրենց շահը կը նային. այս պարագայիս մէջ միշտ դոյզն բան կը համարուի ընծա-յութեան և խնդրողութեան տարբերութենէն պատճառեալ գնոյ զանազանութիւնը: Բայց ոչ նոյնպէս է երբ վաճառք վաճառանոցին մէջ կամ ուրիշ տեղ բազմաթիւ վաճառողաց և գնողաց ձեռքէն կ'անցնին:

Տեսնենք այն դէպքը յորում ընծա-յութիւնն աւելի է քան զխնդրողութիւն. այս բանս կրնայ շատ պատճառներէ առաջ գալ. կամ վաճառողը շատուոր են և ծախելու շատ ապրանք ունին, և կամ գնողք սակաւաթիւ են, քիչ պէտք ունին և գնելու շատ փոյթ չեն ցուցըներ: Երբ ապրանքը շատ է՝ գնողք գիտեն կանխաւ թէ վաճառատեարք պատրաստ են զո՛հ ընելու, որպէս զի շուտ ծախեն. և երբ սակաւաւոր են գնողք՝ գիտեն թէ գնելու քիչ ջանացող կայ և ի՛նչ ալ ըլլայ միշտ ամեն մէկուն համար բան կը մնայ, ուստի չեն շտապեր գնելու: Ընդհակառակն խանութպանք կամ վաճառք ունեցողները որ ապրանքնին չեն ուզեր քովերնին պահել, կամ կը վախեն որ պէտք ունեցած ստակնին չկարենան ձեռք բերել՝ կը փութան ունեցածնին ծախելու. և ասոնցմէ ամեն մէկը պատրաստ է գինը իջեցնելու, որպէս զի եկողը իրմէ գնէ և չթողու որ ուրիշին անցնի: Ուրեմն նոյն օրուան վաճառման արդիւնքն ստորին գին կ'ըլլայ. կ'ըսուի թէ խնդրողութիւնն ու գնողք քիչ են, թէ ընծայումը կամ վաճառքն առատ է, թէ գինք դոյզն են և վաճառքն աժան:

— Այս աժնութեան ազդեցութիւնը, խորհրդածեց լէոնարտ, միթէ աւելի ևս աժնութիւն չիպատճառեր:

— Տարակոյս չկայ. գնողք և վաճառողք այս ազդեցութեան ներքև կը

մնան. առաջինք չեն փութար խնդրելու՝ յուսով որ վաճառքն աւելի աժննայ. ընդհակառակն վաճառողք ծախել չկարենալու վախով նորանոր զիջողութիւններ ընելու պատրաստ են:

— Ըստ այսմ ապրանքը պէտք է որ անչափապէս աժննայ:

— Ոչ. ամեն բանի չափ կայ. նախախնամութեան օրէնքն որ աշխարհիս ամեն բանը կ'ուղղեն՝ թէպէտ և մարդինք ու հակառակ ալ ջանանք, կ'արգելուն որ բնական գինէն շատ չհեռացուի: Նախ չափ մը կայ յորմէ անցնիլ չըլլար, բայց եթէ եզական դիպուածոց մէջ. և է այս, երբ վաճառման գինը ստորնագոյն կ'ըլլայ քան զարդիւնաբերութեան գինը. այս բանս երկայնատեն չիտևեր. շատ շատ կը տևէ մինչև որ այն վաճառքն սպառի. վասն զի չըկայ մէկը որ չդողրի ապրանք առաջ բերելէն՝ երբ կը տեսնէ որ արդիւնաբերութեան գինը վաճառման գինէն աւելի է, որ շատ քիչ առթի մէջ կը հանդիպի:

Մպառումը սովորաբար նոյնպէս կը մնայ եթէ միայն ձախորդութիւնք չընուազեցնեն զայն, և կամ բռնի սպառումէն յառաջ եկեալ ծախուց առաւելութիւնը՝ ինչպէս է հացինը, չպակսեցընէ նուազ կարևոր ամենայն սպառումն. բայց վաճառման քիչ մը ատեն դանդաղիլը դարձեալ շուտով կենդանանալուն պատճառ կ'ըլլայ. սպառողին պաշարն հատնելով աւելի աժնութեան սպասելու փափաքին հակառակ կը ստիպուի գնել. և որովհետև շատերը այս հանգամանաց մէջ կ'ըլլան, դարձեալ վաճառումն յարգ կ'առնու, ապրանքին գինը կը բարձրանայ և թերևս բնական գինն անցնելու չափ:

— Չի կրնար ըլլալ, առարկեց Վիէոլէն, որ սպառումը առաջուրնէ աւելի շատ ըլլայ:

— Շատ անգամ կը պատահի, Վիէոլէն, բաց 'ի հացէն՝ որուն սպառումը գրեթէ հաստատուն է, և դիտողութիւնը շատ իրաւ է: Մէյմը որ ապրանք մը զգալի կերպով սովորական գինէն վար

կ'իյնայ . շատերն որ զուրկ մնացած էին՝ այն զինը իրենց կարողութենէն վեր ըլլալուն համար, զիրենք գոհ ընել կ'ուզեն կամ ուրիշ բաներու տեղ այնմ ծախք ընել . կան ուրիշներ ալ որ չեն տարակուսիր ամենեին զայն ստանալու շատ քանակաւ, ինչպէս ամենքդ ալ գիտէք 'ի փորձոյ . ուրեմն այն ապրանքին սպառումը կ'աւելնայ, խընդրողութիւնն հաւասար կամ աւելի է քան զընծայումը և զիները կը բարձրանան : Այն ատեն հասարակօրէն ըսպառումն առաջուրնէ աւելի կ'ըլլայ, վասն զի նոր սովորութիւններ առաջ եկած կ'ըլլան և յաջորդաբար ըստ կարգի կատարուելիք պէտքեր : Նաև երբեմն արդիւնաւորողք վերջապէս ատնութեամբ գնոյ ալ շահ կ'ընեն, և ատնեցնելով կորսնցուցածնին գնողներուն շատնալովը՝ ոչ միայն ծախքերնին կը հանեն, այլ և մեծապէս կը շահին . իսկ գնողք ևս առաւել կը շահին . այդ ապրանքը լաւ գնով կ'առնուն, կամ աւելի կ'առնուն մի և նոյն գնով . և անոնք որ նախնաբար զուրկ էին անոնցմէ, ան ատեն կարող կ'ըլլան ստանալու :

— Իրաւ որ շատ զարմանալի բան է, ըսաւ Ռնորիոս, այս ընծայութեան և խնդրողութեան կապակցութիւնն ու ազդեցութիւնը :

— Դեռ բան մ'ըսել չէ, կցեց Տիւրրէ . որչափ աւելի քննողութիւննիս առաջ տանինք, այնչափ աւելի պիտի զարմանաք նախախնամութե օրինաց վրայ, որով մարդկանց գործառնութիւնները կը կարգաւորուին : Սակայն անցնինք այն զիպուածին՝ յորում խնդրողութիւնն ընծայութենէն աւելի կ'ըլլայ . ինչպէս նաև հակառակ հանգամանաց մէջ այս հետեանքը կրնայ շատ պատճառներ ունենալ :

Արդիւնաբերութիւնը կրնայ մէկ կամ միւս պատճառով խափանուիլ . ծախողները նուազ են թուով, նուազ է ապրանքնին, կամ թէ աւելի գնողք կը ներկայանան, մեծագոյն պէտք ունենալով և աւելի ևս ծախու ապրանք կ'ուզեն . ուրեմն աւելի կը խնդրուի քան

թէ կ'ընծայուի : Այս ասանկ ըլլալով վաճառողք ծանրէն կը շարժին, իսկ գնողք կ'արտորան . մէկմէկու մէջ նախանձորղութիւն կը մտնէ . և որովհետև ապրանքը քիչ է, վախնալով որ զուրկ մնան՝ ամենայն դը պատրաստ է բարձրագոյն զին վճարելու . ուրեմն սովորաւ կան զինը կ'անցնի : Կ'ըսուի թէ գնողք շատուոր են, և թէ վաճառքը սակաւազիւտ է և թանկագին :

— Արդ առաջին սղութիւնը, հարցուց Լէոնարտ, միթէ մեծագոյն սղութիւն չի պատճառեր, ինչպէս տեսանք որ մէկ ատնութիւն ուրիշ նոր ատնութիւն առաջ կը բերէ :

— Ճիշտ է ըսածդ, Լէոնարտ . վաճառողք և գնողք զիպուածոց ազդեցութիւնը կը կրեն . վաճառողք ծանօթ ըլլալով վաճառանոցին կամ երկրին պիտոյիցը՝ կ'ուզեն շահաւոր ընել իրենց զիրքը . ընդհակառակն գնողք որ պէտք ունին և ապրանաց սակաւութիւնը գիտեն՝ պատրաստ են ձեռք բերելու համար աւելի զոհ ընելու :

— Ապրանքին զինն այնու հետզհետէ կը բարձրանայ, կ'իմանամ ըսաւ Լէոնարտ, բայց դադրելուն պատճառ չեմ տեսներ . վասն զի սղութիւնն ատնութեան պէս չէ, որուն չափ և սահման է վաճառման գնոյն ստորին ըլլալը քան զծախս յառաջբերութեան . իսկ սղութեան չափ չկայ :

— Կը սխալիս, Լէոնարտ, ինչպէս ատնութեան՝ սղութեան ալ չափ կայ . միայն յառաջբերութեան ծախուց վրայ չիկայանար, այլ սպառողին քսակէն . այսպէս է նաև նախանձորղութե մէջ : Քանի աւելի վաճառքի մը զինը կ'աւելնայ, գործածողք և ևս կը ներդուին հայթհայթելու . եթէ շարունակաբար զինը կը բարձրանայ շատերուն կարողութենէն վեր կ'ելլէ, ալ գնելէ ետ կը կենան և ուրիշ ապրանքի հետաժուտ կ'ըլլան : Եւ որչափ զինը բարձրանայ՝ այնչափ ալ անկէ զրկուիլ ստիպուողներուն թիւը կը շատնայ . խընդրողութիւնն ընծայողութենէն աւելի ըլլալով հաւասարակչութեան կը մտն

տենայ և վաճառք իրենց բնական վիճակին կը վերադառնան :

— Կ'ըմբռնեմ այսպէս ըլլալն այն վաճառուց նկատմամբ՝ որ բացարձակ կարևոր չեն, ըսաւ Միքայէլ. բայց ցորենն այնպէս ապրանք մ'է որ ինչ գնով ալ ըլլայ՝ պէտք է ճարել. քիչ գտնուելովը պէտք է որ գինն անսահման կերպով բարձրանայ :

— Յայսմ ալ կը սխալիս, Միքայէլ. ցորենին գնոյն սահմանը նախանձորդութեան յաջող արդիւնք ունենալէն կախումն ունի. սովորական ժամանակ երբ ցորենոյն գինն աժան է՝ օտարէն չի գնուիր, վասն զի տեղափոխութեան ծախքը չեն ներեր որ երկրին մէջ օրական գնով ծախուի. բայց երբ գինը կ'աւելնայ, տեղափոխութեան ծախքերը կարելի է լեցընել նոյն իսկ շատ հեռաւոր տեղերէ բերել տալով : Ծահ նելու յուսով հետզհետէ այս կերպ գործոց ձեռք զարնելու որոշողութիւն կ'ընեն շահախնդիրք. բաւական քանակով կու գայ և գտնուելուն պատճառաւ գինը կը նուազի : Նախանձորդութիւնը կ'արգելու նաև որ սղութեան չափը չանցնի. և յապագայս ևս առաւել պիտի խափանէ որ այս մեծամեծ խտորմունքն չըլլան, յորմէ հիմակուան ժամանակա կը նեղուին ժողովուրդք :

— Ասիկա շատ փափաքելի բան է, ըսաւ լէոնարտոս. եթէ տեղի գտնուելու ըլլայ՝ նախանձորդութեան հետ աղէկ կը կապակցի :

— Նախանձորդութիւնը, յարեց Տիւրքէ, շատ ուրիշ օգուտներ ունի. առջևը կ'առնու գնոց սաստիկ աճելուն, որ խնդրողութեան քան զընծայութիւն առաւելապատիկ ըլլալուն հետևանքն է : Հազիւ թէ իրաց աժէքը բնական գինէն դուրս կ'ելլէ՝ արդիւնարարին շահը կ'աւելնայ. այս շահու աճումը նորանոր անձանց փափաքը կը բերէ, որ մի և նոյն ապրանքն արդիւնաւորելու փափաք կ'ունենան. նոր գործատուներ կը կանգնուին, ապրանքն աւելի կը շատնայ, շատ աւելի աշխատաւորք կը

գրադին, աւելի ևս կը գործադրուի աշխատութիւնը բաժնելու սկզբունքը և շինելու կերպը կը կատարելագործուի. այսպէս աւելի խնայողութեամբ և աժան կը շինուի. և որովհետև շատ առատ կ'երևայ վաճառանոցին մէջ, ընծայութիւնը քան զխնդրողութիւնն աւելի կ'ըլլայ, գինը իրեն նախնական վիճակը կ'առնու, և ետքը ետքը աւելի ալ վար կ'իջնէ :

Եւ իրաւցընէ, մէյմը որ ապրանք աւելի շատ կը շինուի և արդիւնաբերութեան ծախքերը կը նուազին, արդիւնարարք՝ ի նախանձորդութենէ յորդորեալ՝ վաճառման գինը վար կ'իջեցընեն, որպէս զի գնողներն իրենց քաշեն : Այն տեն վաճառքը բազմագունից ստանալի կ'ըլլայ, և առանց արդիւնաւորողաց բովանդակ իրենց շահը կորսնցնելուն, ստանալ ուզողք առանց դժուարութե աժան ձեռք կը բերեն զայնս : Ուստի բարձր գինէ մը որ կը կարծուէր թէ շատ զրկումներ պիտի պատճառէ, առհասարակ ամեն մարդու համար՝ շատ անգամ աւելի վայելք կը յառաջածագի :

— Բայց շատ զարմանալի բան է, ձայնարկեց Ռափոյ. իրաւցընէ հրաշալի բան մը կայ նախախնամութեան այս օրինաց մէջ, որուն էութեանը վրայ շատ մարդիկ և ոչ իսկ կը մտածեն :

— Դիտողութիւնդ շատ ճիշդ է, ըսաւ Տիւրքէ խօսքը վերջացընելով, ինչպէս շատ անգամ արդէն ձեզի ըսեր եմ. որչափ աւելի ետևէ ըլլայ մէկն ընկերական աշխարհի բնական օրէնքը սորվելու՝ այնչափ և ևս զարմանքով կը լեցուի :

ՌԱՐԷ

Կը շարունակուի :